COUNCIL OF EUROPE

CONSEIL DE L'EUROPE

3 հուլիսի 2025 թ.

ԼԱՆԶԱՐՈՏԵԻ ԿՈՄԻՏԵ

«Սեռական շահագործումից և սեռական բռնությունից երեխաներին պաշտպանելու մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի կողմերի կոմիտե

.....

Իրականացման զեկույց

*****

Հավելված՝ հանձնարարականների ցանկ

ԵՐԵԽԱՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՎՍՏԱՀՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ՍԵՌԱԿԱՆ ԲՌՆՈՒԹՅՈՒՆԻՑ. ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐ

Ամփոփագիր

Երեխաների նկատմամբ սեռական բռնության դեպքերի մեծ մասը կատարվում է երեխային ծանոթ և վստահելի անձանց կողմից: Սույն զեկույցում Լանզարոտեի կոմիտեն գնահատում է Լանզարոտեի կոնվենցիայի 48 Մասնակից պետություններում երեխաների պաշտպանությունն իրենց «վստահության շրջանակում»: «Վստահության շրջանակը» ներառում է ընդլայնված ընտանիքի անդամներին, երեխայի խնամքի կամ վերահսկողության գործառույթներ իրականացնող անձանց, ինչպես նաև այն անձանց, որոնց հետ երեխան շփվում է վստահելի միջավայրում, այդ թվում՝ մտերիմ հասակակիցներին: Զեկույցում գնահատվում է, թե ինչպես են Մասնակից պետությունները (այսուհետ՝ Կողմեր) քրեականացնում վստահության շրջանակում երեխաների նկատմամբ սեռական բռնությունը և ինչպես են երեխաները պաշտպանված քրեական վարույթից առաջ, ընթացքում և հետո: Դիտարկվում են նաև ընտանեկան բռնության դեպքերին արձագանքելու հատուկ միջոցները, և թե ինչպես են պետություններն անդրադառնում երեխաների կողմից դրսևորվող վնասակար սեռական վարքագծին: Վերջապես, դիտարկվում են քննության և քրեական հետապնդման կանոնները, ինչպես նաև հանցանք կատարած անձանց նկատմամբ կիրառվող վերահսկողության միջոցները:

Ընդհանուր առմամբ, Լանզարոտեի կոմիտեն արձանագրել է առաջին մոնիթորինգի փուլից ի վեր Լանզարոտեի կոնվենցիայի Կողմերի կողմից գրանցված զգալի առաջընթացը, հատուկ ուշադրություն դարձնելով վստահության շրջանակին, այդ թվում՝ քննության և քրեական վարույթի ընթացքում տուժողների ընթացակարգային երաշխիքներին: Միևնույն ժամանակ, դեռևս առկա են զգալի բացթողումներ, մասնավորապես՝ 18 տարեկանից ցածր տարիքի երեխաների նկատմամբ սեռական բռնության քրեականացման հարցում՝ ընտանեկան սեռական բռնության համատեքստում, ինչպես նաև հարկադրանքի, սպառնալիքի կամ ուժի կիրառման բացակայության պայմաններում: Կողմերին կոչ է արվում նաև բարելավել տուժողների և նրանց մտերիմների իրավական և հոգեբանական աջակցությունը, ինչպես նաև հանցանք կատարած անձանց նկատմամբ վերահսկողությունը և մոնիթորինգը:

Վստահության, իշխանության կամ ազդեցության ճանաչված դիրքում գտնվող անձանց կողմից բոլոր տարիքի երեխաների նկատմամբ սեքսուալ բնույթի բռնությունը քրեականացնող համապարփակ օրենսդրությունն անհրաժեշտ է բոլոր երեխաներին սեռական բռնությունից պաշտպանելու համար: Որոշ Կողմեր առաջընթաց են արձանագրել այս ոլորտում, և երեխաների նկատմամբ սեռական հանցագործությունները քրեական օրենսդրության սահմաններում հստակ հղում են կատարում՝ «վստահության, իշխանության կամ ազդեցության ճանաչված դիրք» հասկացությանը: Սակայն, մի շարք Կողմեր դեռևս սահմանափակում են նման պաշտպանությունը հատուկ հանգամանքներով կամ այն նախատեսում միայն սեռական հարաբերությունների օրինական տարիքից փոքր երեխաների համար: Պետությունների մի մասը՝ արարքը հանցագործություն որակելու համար դեռևս պահանջում են հարկադրանքի տարրի առկայություն: Ընդ որում, որոշ պետություններում երեխաները կարող են ենթարկվել քրեական պատասխանատվության չափահաս ազգականի, ինչպես նաև որդեգրող կամ խնամատար ծնողի հետ սեքսուալ բնույթի գործողություններ կատարելու հանցագործության համար: Մի շարք Կողմեր շարունակում են թույլատրել տուժողի հետ ամուսնությունը՝ մեղավորներին պատասխանատվությունից ազատելու համար կամ չեն քրեականացնում ամուսնացած երեխայի ամուսնու կողմից կատարված սեռական բռնությունը: Որոշ Կողմերում դեռևս գոյություն ունեն խտրական իրավական ձևակերպումներ, որոնք խաթարում են բոլոր երեխաների պաշտպանությունը՝ անկախ երեխա-տուժողի կամ հանցագործի սեռից և սեռական կողմնորոշումից:

Երեխաներին ընտանեկան սեռական բռնությունից պաշտպանելու համար անհրաժեշտ է վաղ հայտնաբերում, արագ պաշտպանողական միջոցների և համակարգված միջամտություններ,

որոնք առաջնահերթություն են տալիս լավագույն շահերի և երեխայի շահերի պաշտպանությանը: Կոմիտեն պարզեց, որ Կողմերի մեծ մասը նախատեսում է ենթադրյալ հանցագործի տնից հեռացում նույնիսկ նախքան քրեական վարույթի սկսվելը: Շատ Կողմեր հնարավոր է նաև լիովին կասեցնել ծնողական իրավունքները և լիազորությունները կամ զրկեն դրանցից՝ մինչև քրեական վարույթի ավարտը կամ ծնողին քրեորեն պատժելուց հետո: Եվ հակառակը, երեխա-տուժողի տնից հեռացումը պետք է դիտվի որպես ծայրահեղ միջոց, մինչդեռ ոչ բոլոր Կողմերն են հստակորեն արտացոլում այդ սկզբունքը օրենքում կամ դատական պրակտիկայում: Երեխաների հետ պարզաբանող բնույթի հարցազրույցներ թույլատրող Կողմերից մեծ մասում անհրաժեշտ չէ ստանալ երեխայի ծնողների կամ օրինական խնամակալների համաձայնությունը, եթե դա կարող է խանգարել երեխային հայտնել սեքսուալ բնույթի բռնության մասին: Կողմերն առաջընթաց են արձանագրել նաև հատուկ ներկայացուցիչների և խնամակալների նշանակման և տրամադրման հարցում՝ այն դեպքերում, երբ ծնողը ենթադրյալ հանցագործ է: Կողմերի մեծ մասն ապահովում է, որ անձնական տվյալների պաշտպանության մասին օրենքները և գաղտնիության կանոնները չխոչընդոտեն երեխաների նկատմամբ սեքսուալ բնույթի բռնության դեպքերին արձագանքող գործակալությունների միջև տեղեկատվության փոխանակմանը:

Հատուկ միջոցներ են անհրաժեշտ **վնասակար սեռական վարքագիծ դրսևորող երեխաների** զարգացման կարիքները հոգալու համար: Կոմիտեն պարզել է, երբ քրեական պատասխանատվության ենթարկվելու տարիքից փոքր երեխան վնասակար սեռական վարքագիծ է դրսևորում մեկ այլ երեխայի նկատմամբ, Կողմերից մեծ մասում նրան ուղարկում են երեխայի խնամքի ծառայություններ և (կամ) նրա նկատմամբ կիրառվում են պաշտպանական միջոցներ: Թեև Կողմերի մեծ մասը քրեական պատասխանատվության տարիքին հասած երեխաներին պատժամիջոցներ կիրառելու հարցում տարբեր մոտեցում է ցուցաբերում նմանատիպ հանցագործություններ կատարած մեծահասակների համեմատ, Կոմիտեն կոչ է անում նրանց որդեգրել վերականգնողական արդարադատության մոտեցում և պահպանել երեխայակենտրոն արդարադատության սկզբունքները:

Քննության և քրեական հետապնդման արդյունավետ մեխանիզմները չափազանց կարևոր են՝ ապահովելու, որ վստահության շրջանակում երեխաների նկատմամբ սեռական բռնության դեպքերը քննվեն անկախ տուժողի բողոք ներկայացնելու կարողությունից կամ պատրաստակամությունից: Զեկույցում նշվում է, որ Կողմերի մեծ մասն այժմ թույլ է տալիս վարույթ սկսել *ex officio*՝ առանց տուժողի կողմից նախնական բողոք ներկայացնելու: Զգալի առաջընթաց է գրանցվել նաև տուժողի կողմից բողոքը հետ վերցնելուց հետո վարույթը շարունակելու հնարավորության հարցում, ընդ որում՝ այս հնարավորությունը թույլատրող Կողմերի թիվն ավելի քան եռապատիկ աճել է: Առաջընթաց է գրանցվել նաև հաշվետվությունների ներկայացման հարցում: Շատ Կողմեր իրավական պարտավորություններ են սահմանում որոշակի մասնագետների համար՝ հաղորդելու երեխաների նկատմամբ սեքսուալ բնույթի հանցագործությունների մասին կասկածների վերաբերյալ և ապահովելու, որ գաղտնիության պահանջը խոչընդոտ չհանդիսանա հաղորդելու պարտականության կատարման համար: Շատ Կողմեր նաև հնարավորություն են նախատեսում աշխատանքից հեռացնելու չարաշահումների համար քննության տակ գտնվող մասնագետներին կամ կամավորներին, ինչպես նաև ապահովելու, որ իրավաբանական անձինք նույնպես պատասխանատվություն կրեն, եթե նրանք որևէ օգուտ են քաղում նման հանցագործությունից:

Քննության և դատավարության ընթացքում տուժող երեխային **անհրաժեշտ են հատուկ երաշխիքներ և պաշտպանություն**՝ կրկնակի տրավմատիզացիայի ռիսկը նվազեցնելու և արդարադատության գործընթացին նրա արդյունավետ մասնակցությունն ապահովելու համար: Ինչ վերաբերում է քննության փուլին, առաջին մոնիթորինգի շրջանից ի վեր զգալի առաջընթաց է գրանցվել՝ ***Բարնահուսի*** մոդելի կիրառման ընդլայնման առումով, որը, երեխաների համար նախատեսված, բազմապրոֆիլ ինտեգրված երեխայակենտրոն

ծառայությունների մաս է կազմում և օգնում է խուսափել տուժող երեխաների երկրորդային զոհականացումից: Քրեական դատավարության համատեքստում մեծ առաջընթաց է գրանցվել երեխաների՝ առանց ֆիզիկապես ներկայության դատարանում ցուցմունք տալու հնարավորության, երեխաների՝ առանց ենթադրյալ հանցագործի ֆիզիկապես ներկայության հարցաքննության, և երեխայի ցուցմունքը տեսագրելու հնարավորության առումով:
Այդուհանդերձ, թեև գրեթե բոլոր Կողմերն ապահովում են, որ նախապես ձայնագրված/կազմված ցուցմունքները ընդունելի լինեն դատարանում, դրանց միայն կեսն է դրանք օգտագործում երեխայի կողմից անմիջականորեն դատարանում տրված ցուցմունքների փոխարեն: Առաջընթաց է գրանցվել նաև տուժող երեխաների անձնական տվյալների պաշտպանական միջոցների առումով: Կողմերի մեծ մասը թույլ է տալիս լսումներ անցկացնել առանց հանրության ներկայության, սահմանելով իրավական դրույթներ, որոնք կանխում են տուժողի ինքնության բացահայտումը լրատվամիջոցներում: Թեև բոլոր Կողմերն անչափահաս տուժողներին տրամադրում են որոշակի ձևի անվճար իրավաբանական խորհրդատվության, նրանցից ոչ բոլորն են տրամադրում իրավաբան մասնագետ կամ փաստաբան՝ անվճար կամ մեծահասակների համեմատ ավելի մեղմ պայմաններով:

Տուժողները և երրորդ անձինք նույնպես կարիք ունեն լրացուցիչ պաշտպանություն՝ քրեական դատավարության շրջանակից դուրս: Շատ Կողմեր ունեն իրավական երաշխիքներ՝ երեխային և նրա ընտանիքի անդամներին անբարենպաստ հետևանքներից կամ երկրորդային զոհ դառնալուց պաշտպանելու համար՝ երեխայի նկատմամբ սեռական բռնության փաստը բացահայտելուց հետո: Առաջընթաց է արձանագրվել նաև տուժողի մերձավոր անձանց բուժօգնության տրամադրման հարցում: Որոշ Կողմերում տուժողի ընտանիքի անդամներին աջակցություն է տրամադրվում ***Բարնահուս*** կամ նմանատիպ այլ ծառայությունների շրջանակներում:

Զգալի բացթողումներ են պահպանվում **հանցագործություն կատարած անձանց՝** պատիժը կրելուց հետո **վերահսկողության և մոնիթորինգի իրականացման**, ինչպես նաև **դատապարտյալների տվյալների վերաբերյալ Կողմերի միջև փոխանակման** հարցերում: Դրանք այն երկու հիմնական քայլերն են, որոնք Կողմերը կարող են ձեռնարկել՝ կրկնահանցագործությունը կանխելու համար:

Լանզարոտեի կոմիտեն վերստին ընդգծում է Կողմերի իրավական դաշտը Լանզարոտեի կոնվենցիային լիովին համապատասխանեցնելու կարևորությունը: Սույն զեկույցը ներկայացնում է նպատակային առաջարկություններ և լավագույն փորձի օրինակներ՝ վստահության շրջանակներում երեխաների սեքսուալ բնույթի բռնությունից իրավական պաշտպանության բարեփոխումներին օժանդակելու համար:

Հավելված՝ հանձնարարականների ցանկ

Հանձնարարականներ
Հանձնարարական 1 Լանզարոտեի կոմիտեն կոչ է անում բոլոր Կողմերին պատշաճ ուշադրություն դարձնել սույն զեկույցում ներկայացված արդյունավետ գործելակերպերին և գնահատել ազգային մակարդակում այն կիրառելու հնարավորությունը: **Հանձնարարական 2** Լանզարոտեի կոմիտեն պահանջում է, որ հետևյալ Կողմերը, 18-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի երկրորդ պարբերության համապատասխան՝ ապահովեն, որ իրենց ներպետական քրեական օրենսդրության դրույթները, որոնք քրեականացնում են վստահության, իշխանության կամ ազդեցության ճանաչված դիրքում գտնվող անձի կողմից երեխայի հետ սեքսուալ բնույթի գործողությունները քրեականացնող օրենսդրությունը ձևակերպված լինի բավականաչափ լայնորեն՝ բոլոր համապատասխան իրավիճակները ներառելու համար. • Իսպանիա՝ սեռական հարաբերություններ ունենալու համար օրենքով սահմանված տարիքից ցածր տարիքի երեխաների վերաբերյալ: • Այլ Կողմեր՝ սեռական հարաբերություններ ունենալու համար օրենքով սահմանված տարիքից ցածր և բարձր տարիքի երեխաների վերաբերյալ[1]: **Հանձնարարական 3** Լանզարոտեի կոմիտեն պահանջում է այն Կողմերից, որոնք դեռևս դա չեն արել[2], 18-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի երկրորդ պարբերության համապատասխան՝ ապահովեն, որ իրենց ներպետական քրեական օրենսդրության դրույթների համաձայն քրեականացվեն բոլոր, այդ թվում՝ օրենքով սահմանված՝ սեռական հարաբերություններ ունենալու համար տարիքից բարձր տարիքի երեխաների հետ սեքսուալ բնույթի գործողությունները վստահության, իշխանության կամ ազդեցության ճանաչված դիրքում գտնվող անձի կողմից: Այդ դրույթները պետք է ձևակերպվեն բավականաչափ լայնորեն՝ բոլոր համապատասխան իրավիճակները ներառելու համար: **Հանձնարարական 4**

[1] Ալբանիա, Բոսնիա և Հերցեգովինա, Խորվաթիա, Չեխիա, Դանիա, Գերմանիա, Հունաստան, Իսլանդիա, Լիխտենշտեյն, Մոնտենեգրո, Սան Մարինո, Սերբիա, Սլովենիա, Թունիս, Թուրքիա և Մեծ Բրիտանիա:

[2] Անդորրա, Հայաստան, Ադրբեջան, Վրաստան, Հունաստան, Լատվիա, Մալթա, Մոլդովայի Հանրապետություն, Հյուսիսային Մակեդոնիա, Ռուսաստանի Ֆեդերացիա և Ուկրաինայ.

Լանզարոտեի կոմիտեն կոչ է անում Մոլդովայի Հանրապետությանը և նմանատիպ դրույթներ ունեցող ցանկացած այլ Կողմի վերանայել իրենց ներպետական օրենսդրությունը՝ ապահովելու համար, որ սեռական հարաբերություններ ունենալու համար օրենքով սահմանված տարիքից ցածր տարիքի երեխան չդիտվի որպես իրավունակ՝ համաձայնելու նման հարաբերությունների:

Հանձնարարական 5

Լանզարոտեի կոմիտեն կոչ է անում Ալբանիային, Ավստրիային, Բուլղարիային, Չեխիային, Հունաստանին, Հյուսիսային Մակեդոնիային, Շվեյցարիային և նմանատիպ դրույթներ ունեցող ցանկացած այլ Կողմի ապահովել, որ երեխան ճանաչվի որպես սեքսուալ բնույթի բռնության տուժող և չենթարկվի քրեական պատասխանատվության իր հետ արյունակցական կապ ունեցող չափահաս ընտանիքի անդամի, որդեգրող կամ խնամատար ծնողի կամ չափահաս քրոջ/եղբոր հետ սեռական հարաբերությունների հանցագործության համար:

Լանզարոտեի կոմիտեն կոչ է անում Ալբանիային, Ավստրիային, Բուլղարիային, Չեխիային, Հունաստանին, Հունգարիային, Իսլանդիային, Հյուսիսային Մակեդոնիային, Շվեյցարիային և նմանատիպ դրույթներ ունեցող ցանկացած այլ Կողմի՝ անչափահաս քույրերի և եղբայրների հետ սեքսուալ բնույթի գործողությունների հետ կապված հանցագործությունների քրեական հետապնդման ընթացքում ապահովել, որ եթե քույրերից և եղբայրներից մեկը՝ մյուսի կողմից ճանաչված վստահության, իշխանության կամ ազդեցության դիրքի չարաշահման տուժող է հանդիսանում, ապա այդ անձը չպետք է ենթարկվի քրեական պատասխանատվության:

Հանձնարարական 6

Լանզարոտեի կոմիտեն կոչ է անում Ալբանիային, Ավստրիային, Բուլղարիային, Չեխիային, Հունաստանին, Հունգարիային, Իսլանդիային, Հյուսիսային Մակեդոնիային, Շվեյցարիային և նմանատիպ դրույթներ ունեցող ցանկացած այլ Կողմի ապահովել, որ քույրերի և եղբայրների միջև սեքսուալ բնույթի գործողությունների համար երեխաները քրեորեն հետապնդվեն միայն ծայրահեղ դեպքում, և որ առաջնահերթությունը տրվի, կախված հանգամանքներից, նրանց վնասակար վարքագծի հետ կապված այլ, ավելի պատշաճ միջոցներին (օրինակ՝ բուժօգնությանը և կրթական միջոցառումներին):

Հանձնարարական 7

Լանզարոտեի կոմիտեն պահանջում է, որ Ռուսաստանի Դաշնությունը և նմանատիպ իրավական դրույթներ ունեցող ցանկացած այլ Կողմ ձեռնարկեն անհրաժեշտ օրենսդրական կամ այլ միջոցներ՝ 27-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ ապահովելու համար, որ հանցանք կատարած անձը չազատվի քրեական պատասխանատվությունից կամ պատժից՝ իր կողմից կատարված սեքսուալ բնույթի հանցագործությանից տուժող երեխայի հետ ամուսնանալու դեպքում, նույնիսկ, եթե տուժող երեխան այդ պահին հասել էր չափահասության տարիքին:

Հանձնարարական 8

Լանզարոտեի կոմիտեն պահանջում է, որ Ռուսաստանի Դաշնությունը և Թունիսը, 18-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի առաջին պարբերության համապատասխան՝ ապահովեն, որ ամուսնացած երեխաները պաշտպանված լինեն իրենց ամուսնու կողմից կատարված սեքսուալ բնույթի հանցագործություններից:

Հանձնարարական 9

Լանզարոտեի կոմիտեն առաջարկում է Կողմերին վերանայել իրենց օրենսդրությունը՝ ապահովելու համար, որ 18-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի երկրորդ պարբերությամբ սահմանված վստահության, իշխանության կամ ազդեցության ճանաչված դիրքում գտնվող անձի կողմից կատարված սեքսուալ բնույթի բռնության բոլոր ձևերը ներառվեն քրեական օրենսդրության դրույթներում, այդ թվում՝ հետևյալ հանցագործությունները, որոնք կատարվել են.

- ներթափանցման միջոցով՝ անկախ համաձայնության առկայությունից, բացակայությունից կամ բռնության, սպառնալիքի և ուժի կիրառումից[3].
- որոշակի ֆիզիկական շփման միջոցով առանց ներթափանցման՝ անկախ համաձայնության առկայությունից, բացակայությունից կամ բռնության, սպառնալիքի և ուժի կիրառումից[4].
- որոշակի դեպքերում՝ առանց ֆիզիկական շփման, տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների օգտագործման միջոցով՝ համաձայն Լանզարոտեի կոնվենցիայի դրույթների:

Հանձնարարական 10

Լանզարոտեի կոմիտեն առաջարկում է այն Կողմերին, որոնք դեռևս դա չեն արել,[5] ձեռնարկել անհրաժեշտ օրենսդրական կամ այլ միջոցներ՝ ապահովելու, որ սեռական նպատակներով երեխային գայթակղելը (grooming-ը) քրեականացվի, նույնիսկ այն դեպքում, երբ չկա հանդիպման առաջարկ, որին հաջորդում են նման հանդիպմանը հանգեցնող կոնկրետ գործողություններ՝ համաձայն Լանզարոտեի կոմիտեի 23-րդ հոդվածի վերաբերյալ կարծիքին:

Հանձնարարական 11

Լանզարոտեի կոմիտեն պահանջում է, որ հետևյալ Կողմերը, 2-րդ հոդվածին համապատասխան՝ ապահովեն, որ բոլոր երեխաները հավասարապես պաշտպանված լինեն սեքսուալ բնույթի բռնությունից, առանց սեռի կամ սեռական կողմնորոշման հիման վրա խտրականության, մասնավորապես՝

[3] Անդորրա, Հայաստան, Ադրբեջան, Վրաստան, Լատվիա, Մալթա, Մոլդովայի Հանրապետություն, Ռուսաստանի Դաշնություն և Ուկրաինա:
[4] Ալբանիա, Ազերբայջան, Վրաստան, Մալթա և Ռուսաստանի Դաշնություն:
[5] Հայաստան, Հունաստան, Իսլանդիա, Լիխտենշտեյն, Լիտվա, Նորվեգիա, Ռումինիա, Ռուսաստանի Դաշնություն, Սան Մարինո, Սերբիա, Թունիս և Թուրքիա:

- Ալբանիան պետք է վերանայի օրենսդրական ձևակերպումը՝ սեռական կողմնորոշման հիման վրա սեքսուալ բնույթի գործողությունների խարանումը կանխելու համար՝ հեռացնելով «համասեռամոլական բնույթի գործողություններ» ձևակերպումը:
- Բուլղարիան և Ռուսաստանի Դաշնությունը պետք է վերանայեն իրենց օրենսդրությունը և հավասար պատիժ սահմանեն ցանկացած սեռի կամ գենդերի երեխաների նկատմամբ սեքսուալ բնույթի բռնության բոլոր ձևերի համար՝ անկախ կատարողի սեռից կամ գենդերից:
- Հյուսիսային Մակեդոնիան և Սերբիան պետք է ապահովեն, որ ցանկացած սեռի խնամատար (խորթ) ծնողները դասվեն այն անձանց թվին, ովքեր կարող են հանցագործ համարվել՝ սեռական հարաբերությունների համար օրենքով սահմանված տարիքից բարձր երեխայի նկատմամբ սեքսուալ բնույթի գործողությունները քրեականացնող օրենսդրական դրույթ(ներ)ում:

Հանձնարարական 12

Լանզարոտեի կոմիտեն առաջարկում է այն Կողմերին, որոնք իրենց օրենսդրական դաշտում նախատեսում են սեքսուալ բնույթի բռնության ենթարկված երեխաների հետ պարզաբանման նպատակով հարցազրույցների անցկացում, և որոնք դեռևս դա չեն արել, ձեռնարկել համապատասխան միջոցներ[6], ապահովելու, որ նման հարցազրույցները հնարավոր լինի անցկացնել առանց երեխայի ծնողներին կամ օրինական խնամակալներին նախապես տեղեկացնելու կամ նրանց նախնական համաձայնությունը ստանալու այն դեպքերում, երբ առկա է ընտանիքում սեքսուալ բնույթի բռնության վերաբերյալ հիմնավոր կասկած, և կան հիմքեր ենթադրելու, որ ծնողները կամ օրինական խնամակալները կարող են խանգարել երեխային հայտնել իր նկատմամբ սեքսուալ բնույթի բռնություն կատարելու մասին տեղեկությունը:

Հանձնարարական 13

Լանզարոտեի կոմիտեն պահանջում է, որ այն Կողմերը, որոնք դեռևս դա չեն արել[7], ձեռնարկեն անհրաժեշտ օրենսդրական կամ այլ միջոցներ՝ 14-րդ հոդվածի 3-րդ մասի առաջին պարբերության համապատասխան, առերևույթ հանցանք կատարած անձին բնակության վայրից հեռացնելու հնարավորություն ապահովելու համար, այդ թվում՝ քրեական վարույթ սկսելուց առաջ և դրա շրջանակից դուրս:

Հանձնարարական 14

Լանզարոտեի կոմիտեն կոչ է անում բոլոր Կողմերին ապահովել, որ առերևույթ հանցանք կատարած անձին բնակության վայրից հեռացնելու դեպքում ձեռնարկվեն միջոցներ՝ ընտանիքի մնացած անդամների սոցիալ-տնտեսական բարեկեցությունը և հոգեբանական-սոցիալական աջակցությունն ապահովելու համար:

[6] Դանիա, Գերմանիա, Հունաստան, Լեհաստան, Ռուսաստանի Դաշնություն, Սլովակիայի Հանրապետություն, Իսպանիա և Միացյալ Թագավորություն (Անգլիա և Վելս):
[7] Ալբանիա, Ազերբայջան, Խորվաթիա, Դանիա, Լիտվա, Մոնակո, Հյուսիսային Մակեդոնիա, Նորվեգիա, Ռուսաստանյան Դաշնություն, Սան Մարինո և Թունիս.

Հանձնարարական 15

Լանզարոտեի կոմիտեն առաջարկում է այն Կողմերին, որոնք դեռևս դա չեն արել[8], ապահովել, որ տուժող երեխային ընտանեկան միջավայրից հեռացնելու հարցը դիտարկվի միայն այն դեպքում, եթե ենթադրյալ հանցագործին նույն միջավայրից հեռացնելը, այլ միջոցների հետ համատեղ, բավարար չէ երեխային պաշտպանելու համար կամ անհնար է տվյալ գործի հատուկ հանգամանքներում, և որ դա արվի երեխայի լավագույն շահերից ելնելով:

Հանձնարարական 16

Լանզարոտեի կոմիտեն պահանջում է այն Կողմերից, որոնք դեռևս դա չեն արել[9], ապահովել՝ 10-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան, որ երեխաների նկատմամբ սեքսուալ բնույթի բռնության դեպքերին արձագանքող կառույցները հնարավորություն ունենան տեղեկատվություն փոխանակել՝ երեխայի լավագույն շահերին և պատշաճ երաշխիքներին համապատասխան՝ չխախտելով տվյալների պաշտպանության օրենսդրությունը կամ տվյալների գաղտնիության կանոնները:

Հանձնարարական 17

Լանզարոտեի կոմիտեն կոչ է անում բոլոր Կողմերին ապահովել, որ՝

- երեխայի պաշտպանությունը և քրեական վարույթն երաշխավորելու համար, երեխայի լավագույն շահերից ելնելով, ինքնաբեաբար կատարվի ռիսկի գնահատում՝ հիմնված երեխայի լավագույն շահերի վրա, յուրաքանչյուր դեպքում, երբ ծնողին կամ օրինական խնամակալին կասկածում կամ մեղադրում են սեփական երեխայի նկատմամբ սեքսուալ բնույթի բռնության մեջ՝ ծնողական կամ խնամակալության իրավունքները կամ լիազորությունների կասեցման կամ ժամանակավոր դադարեցման վերաբերյալ որոշում կայացնելու նպատակով:
- յուրաքանչյուր դեպքում, երբ ծնողը կամ օրինական խնամակալը դատապարտվում է երեխայի նկատմամբ սեքսուալ բնույթի բռնության համար, ինքնաբերաբար կատարվի ռիսկի և երեխայի լավագույն շահերի գնահատում՝ ծնողական կամ խնամակալական իրավունքների կամ լիազորությունների կասեցման կամ ժամանակավոր դադարեցման վերաբերյալ որոշում կայացնելու նպատակով:

Հանձնարարական 18

Լանզարոտեի կոմիտեն պահանջում է, որ Լիխտենշտեյնը և Ռուսաստանի Դաշնությունը՝ 31-րդ հոդվածի 4-րդ մասին համապատասխան, ապահովեն, որ ծնողական իրավունք կրողների և

[8] Ալբանիա, Հայաստան, Ադրբեջան, Բելգիա, Բոսնիա և Հերցեգովինա, Խորվաթիա, Չեխիա, Դանիա, Վրաստան, Հունաստան, Հունգարիա, Իռլանդիա, Մոնակո, Մոնտենեգրո, Հյուսիսային Մակեդոնիա, Ռուսաստան, Սան Մարինո, Սերբիա, Սլովենիա, Իսպանիա, Թունիս, Ուկրաինա և Մեծ Բրիտանիա:
[9] Ալբանիա, Ադրբեջան, Լյուքսեմբուրգ, Մոնտենեգրո, Հյուսիսային Մակեդոնիա, Լեհաստան, Ռուսաստանի Դաշնություն, Սան Մարինո, Թունիս, Ուկրաինա և Միացյալ Թագավորություն (Սկոտլանդիա):

տուժող երեխայի միջև շահերի բախման դեպքում նշանակվեն *ad litem* հատուկ ներկայացուցիչներ և դատավորներ:

Հանձնարարական 19

Լանզարոտեի կոմիտեն պահանջում է, որ այն Կողմերը, որոնք դեռևս դա չեն արել[10], ձեռնարկեն օրենսդրական և այլ միջոցներ՝ ապահովելու, որ 5-րդ հոդվածի 2-րդ մասին համապատասխան, հատուկ ներկայացուցիչները և խնամակալները (*ad litem)* բավարար գիտելիքներ ունենան երեխաների սեռական շահագործման և նրանց նկատմամբ սեքսուալ բնույթի բռնության վերաբերյալ:

Հանձնարարական 20

Լանզարոտեի կոմիտեն հորդորում է այն Կողմերին, որոնք դեռևս դա չեն արել, ձեռնարկել անհրաժեշտ օրենսդրական կամ այլ միջոցներ.

- խուսափել մեկ անձի կողմից փաստաբանի և խնամակալի (*ad litem)* գործառույթների համատեղումից[11]. և
- անվճար տրամադրել հատուկ ներկայացուցիչներ և խնամակալներ (*ad litem)* տուժող երեխայի համար[12]:

Հանձնարարական 21

Լանզարոտեի կոմիտեն պահանջում է, որ այն Կողմերը, որոնք դեռևս դա չեն արել[13], 16-րդ հոդվածի 3-րդ մասին համապատասխան ապահովեն միջամտության ծրագրեր կամ միջոցներ՝ հարմապատասխանեցված սեքսուալ բնույթի հանցագործություն կատարած, այդ թվում՝ քրեական պատասխանատվության տարիքից ցածր տարիքի երեխաների զարգացման կարիքներին:

Հանձնարարական 22

Լանզարոտեի կոմիտեն պահանջում է, որ բոլոր Կողմերը, 6-րդ հոդվածին համապատասխան, բոլոր երեխաներին տրամադրեն համապարփակ կրթություն՝ հնարավորություն տալով նրանց ճանաչել վնասակար սեքսուալ բնույթի գործողությունները, խուսափել վնասակար սեռական վարքագծից և օգտվել աջակցության ծառայություններից՝ սեքսուալ բնույթի բռնության կամ սեռական շահագործման ենթարկվելու դեպքում:

---

[10] Բելգիա, Չեխիա, Դանիա, Գերմանիա, Հունաստան, Լիխտենշտեյն, Լիտվա, Ռուսաստանի Դաշնություն, Սան Մարինո, Սերբիա, Սլովենիա, Ուկրաինա.

[11] Ալբանիա, Անդորրա, Ավստրիա, Բոսնիա և Հերցեգովինա, Բուլղարիա, Դանիա, Էստոնիա, Վրաստան, Գերմանիա, Լիխտենշտայն, Լյուքսեմբուրգ, Մոնտենեգրո, Հյուսիսային Մակեդոնիա, Նորվեգիա, Լեհաստան, Պորտուգալիա, Շվեդիա, Շվեյցարիա, Թունիս, Թուրքիա և Ուկրաինա:

[12] Բելգիա, Իտալիա, Լիխտենշտեյն, Ռուսական ֆեդերացիա, Սերբիա, Ուկրաինա և Միացյալ Թագավորություն:

[13] Ալբանիա, Բուլղարիա, Դանիա, Հյուսիսային Մակեդոնիա, Սան Մարինո և Սլովակիայի Հանրապետություն:

Հանձնարարական 23

Լանզարոտեի կոմիտեն կոչ է անում բոլոր Կողմերին, հնարավորության դեպքում, Եվրոպայի խորհրդի երեխայակենտրոն արդարադատության ուղեցույցներին համահունչ, որդեգրել վերականգնողական արդարադատության մոտեցում և պահպանել երեխայակենտրոն արդարադատության սկզբունքները՝ վնասակար սեռական վարքագիծ դրսևորող կամ սեքսուալ բնույթի հանցագործություն կատարած քրեական պատասխանատվության տարիքից բարձր տարիքի երեխաների հետ առնչվելիս:

Հանձնարարական 24

Լանզարոտեի կոմիտեն կոչ է անում բոլոր Կողմերին ապահովել, որ Եվրոպայի խորհրդի՝ երեխաների համար բարենպաստ արդարադատության ուղեցույցներին համահունչ, երեխաների կալանավորումը կատարվի միայն ծայրահեղ դեպքում:

Հանձնարարական 25

Լանզարոտեի կոմիտեն պահանջում է Հունգարիայից, Հյուսիսային Մակեդոնիայից, Սան Մարինոյից և Թուրքիայից՝ 32-րդ հոդվածին համապատասխան երաշխավորել, որ Լանզարոտեի կոնվենցիայում սահմանված սեռական շահագործման և նրանց նկատմամբ կատարված սեքսուալ բնույթի բռնության բոլոր ձևերը հնարավոր լինի քննել և/կամ քրեական պատասխանատվություն սահմանել տուժողի կողմից բողոքի բացակայության դեպքում:

Հանձնարարական 26

Լանզարոտեի կոմիտեն առաջարկում է Պորտուգալիային ձեռնարկել անհրաժեշտ օրենսդրական կամ այլ միջոցներ՝ պարզեցնելու դրույթները և պարզաբանելու, որ երեխաների սեռական շահագործման և նրանց նկատմամբ սեքսուալ բնույթի բռնության բոլոր հանցագործությունները հնարավոր լինի քննել և քրեական պատասխանատվություն սահմանել տուժողի կողմից բողոքի բացակայության դեպքում:

Հանձնարարական 27

Լանզարոտեի կոմիտեն պահանջում է, որ Հյուսիսային Մակեդոնիան, Ռուսաստանի Դաշնությունը և Սերբիան, 32-րդ հոդվածին համապատասխան՝ ապահովեն վարույթը շարունակելու հնարավորությունը նույնիսկ այն դեպքում, եթե տուժողը հետ է վերցնում իր դիմումը:

Հանձնարարական 28

Լանզարոտեի կոմիտեն կոչ է անում Կողմերին, մասնավորապես՝ Անդորրային, ապահովել, որ ընդունարանի աշխատակիցներին տրվի համապատասխան վերապատրաստում՝ ապահովելու

համար, որ նրանք գրանցեն երեխաների նկատմամբ սեքսուալ բնույթի բռնության դեպքերը, նույնիսկ տուժողի կողմից բողոքի բացակայության դեպքում:

Հանձնարարական 29

Լանզարոտեի կոմիտեն կոչ է անում Կողմերին, մասնավորապես՝ Դանիային, ապահովել համապատասխան երաշխիքներ՝ նպատակ ունենալով պաշտպանել տուժողին և կանխել նրա կրկնակի տրավմատիզացիան այն դեպքերում, երբ նրան հրավիրում են հանդես գալու որպես վկա, նույնիսկ այն դեպքերում, եթե տուժողը հետ է վերցնում իր բողոքը:

Հանձնարարական 30

Լանզարոտեի կոմիտեն կոչ է անում բոլոր Կողմերին ապահովել, որ երեխայի լավագույն շահերը պատշաճ կերպով հաշվի առնվեն այն դեպքերում, երբ որոշում է կայացվում շարունակել կամ դադարեցնել վարույթը՝ երեխայի նկատմամբ սեքսուալ բնույթի հանցագործությունների վերաբերյալ՝ տուժողի կողմից բողոքը հետ վերցնելուց հետո:

Հանձնարարական 31

Լանզարոտեի կոմիտեն կոչ է անում Սերբիային ապահովել, որ «անչափահասի հետ կենակցության» հնարավոր հանցագործությունից տուժած երեխաները համակարգված կերպով ստուգվեն՝ իրենց նկատմամբ սեքսուալ բնույթի բռնության կամ սեռական շահագործման հետ կապված հնարավոր հանցագործությունները բացահայտելու նպատակով, և որ տվյալ կոնկրետ հանցագործության համար քրեական վարույթի հարուցումը մերժելու կամ վարույթը կարճելու որոշում կայացնելիս հաշվի առնվեն երեխայի լավագույն շահերը:

Հանձնարարական 32

Լանզարոտեի կոմիտեն կոչ է անում բոլոր Կողմերին՝ «Արտատնային խնամքի տակ գտնվող երեխաներին սեքսուալ բնույթի շահագործումից և բռնությունից պաշտպանելու մասին» հռչակագրին համահունչ, ձեռնարկել անհրաժեշտ օրենսդրական կամ այլ միջոցներ, ապահովելու, որ պետական, մասնավոր կամ կամավորական հատվածում աշխատող մասնագետները պատասխանատվության ենթարկվեն՝ երեխայի նկատմամբ սեռական բնույթի հանցագործություն կատարելու կամ արտատնային խնամքի հաստատություններում տեղի ունեցած նման հանցագործությունների մասին իրավասու մարմիններին չհաղորդելու դեպքում:

Հանձնարարական 33

Լանզարոտեի կոմիտեն պահանջում, որ այն Կողմերը, որոնք դեռևս դա չեն արել[14], 12-րդ հոդվածի 1-ին կետին համապատասխան՝ ապահովեն, որ երեխաների հետ աշխատող որոշ

[14] Ալբանիա, Անդորրա, Հայաստանն, Ադրբեջան, Բոսնիա և Հերցեգովինա, Բուլղարիա, Չեխիա, Դանիա, Էստոնիա, Գերմանիա, Հունաստան, Լիխտենշտեյն, Լիտվա, Լյուքսեմբուրգ, Մոլդովայի Հանրապետություն, Մոնակո, Մոնտենեգրո, Հյուսիսային Մակեդոնիա, Նորվեգիա, Լեհաստան,

մասնագետների համար ներպետական օրենսդրությամբ սահմանված գաղտնիության կանոնները չխոչընդոտեն իրավասու ծառայություններին զեկուցելու իրենց հնարավորությանը, երբ առկա են ողջամիտ հիմքեր ենթադրելու, որ երեխան ենթարկվել է սեռական շահագործման կամ սեռական բնույթի բռնության:

Հանձնարարական 34

Լանզարոտեի կոմիտեն կոչ է անում բոլոր Կողմերին ապահովել, որ մասնագետները պարտավոր չլինեն հաղորդելուց առաջ տեղեկացնել երեխային, նրա ծնողներին կամ խնամակալներին, եթե հաղորդող մասնագետը կարծում է, որ նման ծանուցումը կարող է վտանգել երեխայի, ծնողների, խնամակալների կամ իրենց իսկ անձնական անվտանգությանը:

Հանձնարարական 35

Լանզարոտեի կոմիտեն կոչ է անում բոլոր Կողմերին ապահովել հատուկ պաշտպանություն այն մասնագետների համար, ովքեր բարեխղճորեն հաղորդում են երեխաների նկատմամբ կատարված սեռական բնույթի հանցագործությունների մասին, այդ թվում՝ պաշտպանել նրանց մասնագիտական կամ աշխատանքային տույժերից:

Հանձնարարական 36

Լանզարոտեի կոմիտեն կոչ է անում բոլոր Կողմերին ուժեղացնել այն անձանց պաշտպանությունը, ովքեր բարեխղճորեն հաղորդում են երեխաների սեռական շահագործման կամ նրա նկատմամբ սեռական բնույթի բռնության մասին և հնարավորինս նվազագույն մակարդակում պահպանել կասկածների վերաբերյալ հաղորդելու շեմը:

Հանձնարարական 37

Լանզարոտեի կոմիտեն կոչ է անում բոլոր Կողմերին քննության հենց սկզբից թույլատրել ենթադրյալ հանցագործին արտատնային խնամքի հաստատությունից հեռացնելու հնարավորությունը:

Հանձնարարական 38

Լանզարոտեի կոմիտեն կոչ է անում բոլոր Կողմերին դիտարկել նախազգուշական միջոցների կիրառման հնարավորությունը՝ Լանզարոտեի կոնվենցիային համապատասխան սահմանված հանցագործությունների վերաբերյալ քրեական հետաքննությունների և վարույթների ընթացքում ենթադրյալ հանցագործներին երեխաների հետ շփումներ ներառող մասնագիտական կամ կամավորական գործունեությունից բացառելու համար:

Հանձնարարական 39

Ռուսաստանի Դաշնություն, Սերբիա, Սլովակիայի Հանրապետություն, Սլովենիա, Իսպանիա, Շվեդիա, Ուկրաինա և Միացյալ Թագավորություն:

Լանզարոտեի կոմիտեն պահանջում է այն Կողմերից, որոնք դեռևս դա չեն արել[15], 26-րդ հոդվածին համապատասխան՝ ձեռնարկել անհրաժեշտ օրենսդրական կամ այլ միջոցներ, ապահովելու, որ իրավաբանական անձինք պատասխանատվության ենթարկվեն երեխաների սեռական շահագործման և նրանց նկատմամբ սեռական բնույթի բռնության համար:

Հանձնարարական 40

Լանզարոտեի կոմիտեն շարունակում է «Երեխաների տուն» կամ «Բարնահուս» մոդելը ճանաչել որպես արդյունավետ գործելակերպ և կոչ է անում այն Կողմերին, որոնք դեռևս դա չեն արել, իրենց երկրի տարածքում հասանելի դարձնել նմանատիպ բազմապրոֆիլ և միջգերատեսչական ծառայությունները՝ սեռական շահագործման և սեռական բնույթի բռնության տուժող երեխաների պաշտպանության համար:

Հանձնարարական 41

Լանզարոտեի կոմիտեն կոչ է անում Նորվեգիային և ցանկացած այլ Կողմերին, որոնք դեռևս դա չեն արել, մինչև 18 տարեկան բոլոր երեխաներին հնարավորություն ընձեռել օգտվելու մանկատների կամ երկրում գործող այլ նմանատիպ բազմապրոֆիլ և միջգերատեսչական ծառայությունների կողմից մատուցվող ծառայություններից:

Հանձնարարական 42

Լանզարոտեի կոմիտեն պահանջում է, որ Ռուսաստանի Դաշնությունը, 35-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետին համապատասխան՝ ապահովի, որ տուժող երեխաների հետ հարցազրույցի համար պատասխանատու բոլոր աշխատակիցները պարտադիր անցնեն համապատասխան վերապատրաստում:

Հանձնարարական 43

Լանզարոտեի կոմիտեն պահանջում է, որ այն Կողմերը, որոնք դեռևս դա չեն արել,[16] 35-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետին համապատասխան՝ ձեռնարկեն անհրաժեշտ օրենսդրական կամ այլ միջոցներ, որպեսզի ապահովեն, որ տուժող երեխաների հետ հարցազրույցներն անցկացվեն հանցագործությունից հետո հնարավորինս արագ:

Հանձնարարական 44

Լանզարոտեի կոմիտեն պահանջում է, որ այն Կողմերը, որոնք դեռևս դա չեն արել,[17] 35-րդ հոդվածի 1-ին մասի «դ» կետին համապատասխան, ձեռնարկեն անհրաժեշտ օրենսդրական

[15] Անդորրա, Ադրբեջանի, Դանիա, Իսլանդիա, Լիխտենշտայն, Մալտա, Հյուսիսային Մակեդոնիա, Ռուսաստանի Դաշնություն և Սերբիա:
[16] Բուլղարիա, Ֆրանսիա, Հունաստան, Ռուսաստանի Դաշնություն, Թունիս, Ուկրաինա, Միացյալ Թագավորություն:
[17] Բուլղարիա, Ֆրանսիա, Հունաստան, Լյուքսեմբուրգ, Մալթա, Հյուսիսային Մակեդոնիա, Պոլսկա, Ռուսաստանի Դաշնություն, Ուկրաինա, Միացյալ Թագավորություն.

կամ այլ միջոցներ, ապահովելու համար, որ այն դեպքերում, երբ անհրաժեշտ է տուժողին հարցաքննել մեկից ավելի անգամ, հարցազրույցները, հնարավորության դեպքում, անցկացվեն մեկ անձի կողմից և միասնական պայմաններում՝ պահպանելով նույնպիսի երեխայակենտրոն ընթացակարգային երաշխիքները, ինչ առաջին անգամ:

Հանձնարարական 45

Լանզարոտեի կոմիտեն կոչ է անում Վրաստանին, Հյուսիսային Մակեդոնիային և Ռուսաստանի Դաշնությանը ձեռնարկել անհրաժեշտ օրենսդրական կամ այլ միջոցներ՝ որոնք կապահովեն, որ քրեական գործերով պաշտպանող կողմը կարողանա վիճարկել հարցաքննության ընթացքում երեխայի կողմից տրված ցուցմունքները, ինչը թույլ կտա վերացնել դատավարության ընթացքում երեխայի՝ դատարանում ներկա գտնվելու անհրաժեշտությունը:

Հանձնարարական 46

Լանզարոտեի կոմիտեն պահանջում է, որ այն Կողմերը, որոնք դեռևս դա չեն արել,[18] ապահովեն, որ սեռական շահագործման կամ սեքսուալ բռնության ենթարկված բոլոր 18 տարեկանից փոքր երեխաները կարողանան օգտվել Լանզարոտեի կոնվենցիայով սահմանված դատավարական երաշխիքներից:

Հանձնարարական 47

Լանզարոտեի կոմիտեն կոչ է անում բոլոր Կողմերին, որպես ընդհանուր կանոն ապահովել, որ 18 տարեկանից փոքր տուժող երեխաներին հնարավոր լինի լսել առանց դատարանում ֆիզիկապես ներկա լինելու, եթե դա չի հակասում նրանց լավագույն շահերին:

Հանձնարարական 48

Լանզարոտեի կոմիտեն պահանջում է, որ այն Կողմերը, որոնք դեռևս դա չեն արել, 31-րդ հոդվածի 1-ին մասի «է» կետին համապատասխան՝ ապահովեն, որ որպես ընդհանուր կանոն, երեխաները չառերեսվեն ենթադրյալ հանցագործների հետ[19], և պահանջում է, որ ներպետական օրենսդրությամբ որևէ բացառություններ նախատեսված լինելու դեպքում, դրանք համապատասխանեն երեխայի լավագույն շահերի սկզբունքին և ենթակա լինեն անկախ փորձագիտական քննության[20]:

Հանձնարարական 49

Լանզարոտեի կոմիտեն կոչ է անում բոլոր Կողմերին ձեռնարկել անհրաժեշտ օրենսդրական կամ այլ միջոցներ՝ պաշտպանելու տուժող երեխաներին ենթադրյալ հանցագործների հետ շփումից՝

[18] Հայաստան, Ադրբեջան, Դանիա, Էստոնիա, Իսլանդիա, Նորվեգիա, Ռուսաստանի Դաշնություն, Սերբիա, Սլովենիա և Իսպանիա:
[19] Լյուքսեմբուրգ, Մոնակո և Ռուսաստանի Դաշնություն:
[20] Ադրբեջան, Հունաստան, Հունգարիա, Լյուքսեմբուրգ, Մոնակո, Մոնտենեգրո, Ռուսաստանյան Դաշնություն, Սլովենիա և Շվեյցարիա:

ընթացող քրեական քննությանը կամ վարույթին զուգահեռ ընտանեկան դատարանի կամ խնամքի հաստատության նախաձեռնությամբ իրականացվող վարույթի համատեքստում:

Հանձնարարական 50

Լանզարոտեի կոմիտեն պահանջում է, որ այն Կողմերը, որոնք դեռևս դա չեն արել,[21] 31-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ ձեռնարկեն անհրաժեշտ օրենսդրական կամ այլ միջոցներ՝ կանխելու ցանկացած տեղեկատվության հրապարակային տարածումը, այդ թվում՝ լրատվամիջոցների կողմից, որը կարող է հանգեցնել սեռական շահագործման կամ սեքսուալ բնույթի բռնության ենթարկված ցանկացած երեխայի նույնականացմանը:

Հանձնարարական 51

Լանզարոտեի կոմիտեն պահանջում է, որ Հյուսիսային Մակեդոնիան, 36-րդ հոդվածի 2-րդ մասին համապատասխան՝ ապահովի, որ երեխաների սեռական շահագործման և նրանց նկատմամբ սեքսուալ բնույթի բռնության վերաբերյալ քրեական վարույթները հնարավոր լինի անցկացնել առանց հանրության ներկայության:

Հանձնարարական 52

Լանզարոտեի կոմիտեն կոչ է անում բոլոր Կողմերին ապահովել, որ, եթե երեխան գտնվում է խնամակալի կամ սոցիալական ծառայությունների խնամքի տակ՝ իր նկատմամբ սույն Կոնվենցիայով նախատեսված հանցագործություն կատարելու կասկածի պատճառով, և ունի քրեական վարույթի կողմի կարգավիճակ, այդ ծառայությունները պարտավոր լինեն երեխայի անունից դիմել իրավաբանական խորհրդատվության:

Հանձնարարական 53

Լանզարոտեի կոմիտեն կոչ է անում բոլոր Կողմերին ապահովել, որ սեքսուալ բնույթի բռնության ենթարկված երեխաների համար իրավաբանական խորհրդատվությունը և օգնությունը հասանելի լինելու դեպքում, նրանց տրվի տեղեկատվություն, որը նրանց հնարավորություն կտա օգտվել այդ ծառայություններից:

Հանձնարարական 54

Լանզարոտեի կոմիտեն կոչ է անում բոլոր Կողմերին անվճար իրավաբանական օգնություն տրամադրել սեռական շահագործման կամ սեքսուալ բնույթի բռնության ենթարկված երեխաներին, հատկապես վստահության, իշխանության կամ ազդեցության դիրքի չարաշահման դեպքերում:

---

[21] Հայաստան, Ադրբեջան, Բոսնիա և Հերցեգովինա, Էստոնիա, Գերմանիա, Իսլանդիա, Լատվիա, Լիխտենշտայն, Մոլդովայի Հանրապետություն, Մոնակո, Նիդեռլանդներ, Հյուսիսային Մակեդոնիա, Նորվեգիա, Լեհաստան, Ռումինիա (14 տարեկանից բարձր երեխաների վերաբերյալ), Ռուսաստանի Դաշնություն, Սլովակիայի Հանրապետություն, Շվեդիա և Շվեյցարիա:

Հանձնարարական 55

Լանզարոտեի կոմիտեն կոչ է անում բոլոր Կողմերին քննչական և դատական վարույթներին մասնակցող բոլոր տարիքի տուժող երեխաների համար ապահովել որակավորված մասնագետի կողմից հոգեբանական աջակցություն՝ անկախ իշխանությունների հայեցողությունից կամ տուժողի կամ նրա ներկայացուցչի խնդրանքից:

Հանձնարարական 56

Լանզարոտեի կոմիտեն պահանջում է, որ Նորվեգիան, 2-րդ հոդվածին համապատասխան, ապահովի, որ տուժողները և նրանց մերձավորները կարողանան աջակցություն ստանալ առանց որևէ խտրականության:

Հանձնարարական 57

Լանզարոտեի կոմիտեն պահանջում է, որ այն Կողմերը, որոնք դեռևս դա չեն արել[22],ապահովեն, որ տուժողները և նրանց մերձավորները կարողանան ստանալ համապատասխան աջակցություն, նույնիսկ եթե նրանք դատարանում որպես վկա հանդես չեն գալիս:

Հանձնարարական 58

Լանզարոտեի կոմիտեն կոչ է անում Հայաստանին, Ուկրաինային և ցանկացած այլ Կողմերին, որոնք աջակցություն են ցուցաբերում տուժող երեխաներին ընտանեկան բռնության կամ մարդկանց թրաֆիքինգի տուժողների համար նախատեսված միջամտությունների համատեքստում, այդ շրջանակներում հստակ հղում կատարել սեռական շահագործման կամ սեքսուալ բնույթի բռնության տուժող երեխաներին:

Հանձնարարական 59

Լանզարոտեի կոմիտեն կոչ է անում բոլոր Կողմերին ապահովել, որ տուժողներին և նրանց մերձավորներին աջակցություն, այդ թվում՝ արտակարգ հոգեբանական աջակցություն ցուցաբերող ծառայություններին հատկացվի բավարար ֆինանսավորում:

Հանձնարարական 60

Լանզարոտեի կոմիտեն կոչ է անում բոլոր Կողմերին ձեռնարկել անհրաժեշտ օրենսդրական կամ այլ միջոցներ՝ ապահովելու համար, որ տուժող երեխաների հետ աշխատող մասնագետներին հասանելի լինի վերապատրաստումը և այլ ռեսուրսները, որոնք նրանց հնարավորություն կտան բացահայտել և պատշաճ կերպով արձագանքել շահերի հնարավոր բախումներին՝ երեխայի վերաբերյալ տեղեկատվության մատչելիության համատեքստում:

[22] Ադրբեջան, Բոսնիա և Հերցեգովինա:

Հանձնարարական 61

Լանզարոտեի կոմիտեն կոչ է անում բոլոր Կողմերին ապահովել, չխանգարելով փաստերի ազատ և պատշաճ գնահատմանը, որ այն դեպքում, երբ երեխան տրվում է բուժօգնություն, դա բացասաբար չանդրադառնա երեխայի ցուցմունքների հավաստիության կամ կարևորության գնահատման վրա:

Հանձնարարական 62

Լանզարոտեի կոմիտեն կոչ է անում բոլոր Կողմերին ապահովել, որ սեռական շահագործման և սեքսուալ բնույթի բռնության ենթարկված երեխաները կարողանան օգտվել երկարաժամկետ աջակցությունից, որը նախատեսված է իրենց հատուկ կարիքները հոգալու համար:

Հանձնարարական 63

Լանզարոտեի կոմիտեն պահանջում է, որ այն Կողմերը, որոնք դեռևս դա չեն արել,[23] ստեղծեն կառուցակարգեր՝ երեխաների սեռական շահագործման և նրանց նկատմամբ սեռական բռնության համար դատապարտված անձանց վերահսկողության և մոնիթորինգի համար՝ 27-րդ հոդվածի 4-րդ մասին համապատասխան:

Հանձնարարական 64

Լանզարոտեի կոմիտեն կոչ է անում Կողմերին ուժեղացնել երեխաների սեռական շահագործման կամ նրանց նկատմամբ սեքսուալ բնույթի բռնության համար դատապարտված հանցագործների վերահսկողությունը և մոնիթորինգը, մասնավորապես՝ հաշվի առնելով ստորև ներկայացվող լրացուցիչ ուղեցույցում թվարկված քայլերը:

Հանձնարարական 65

Լանզարոտեի կոմիտեն վերահաստատում է Տվյալների հավաքագրման մեխանիզմների վերաբերյալ զեկույցի Հանձնարարականի 11-րդ կետը, որը պահանջում է, որ այն Կողմերը, որոնք դեռևս դա չեն արել[24], համագործակցեն այլ Կողմերի հետ՝ Լանզարոտեի կոնվենցիայով սահմանված հանցագործությունների համար դատապարտված անձանց ինքնության և գենետիկական պրոֆիլի վերաբերյալ տվյալների փոխանակման միջոցով՝ տվյալների փոխանակման համաձայնագրերին և արձանագրություններին համահունչ, նման հանցագործությունների կանխարգելման և հետապնդման նպատակով՝ 37-րդ հոդվածի 3-րդ մասին համապատասխան:

---

[23] Ալբանիա, Անդորրա, Հայաստան, Ադրբեջան, Հունաստան, Լիխտենշտեյն, Մոլդովայի Հանրապետություն, Նորվեգիա, ՌԴ, Սերբիա, Սլովակիայի Հանրապետություն և Թունիս:

[24] Ալբանիա, Անդորրա, Հայաստան, Ավստրիա, Ադրբեջանի Հանրապետություն, Բոսնիա և Հերցեգովինա, Բուլղարիա, Վրաստան, Գերմանիա, Հունաստան, Լիխտենշտեյն, Մալթա, Մոնակո, Մոնտենեգրո, Հյուսիսային Մակեդոնիա, Իսլանդիա, Ռուսաստանի Դաշնություն, Սան Մարինո, Սերբիա, Սլովենիա, Շվեյցարիա, Թունիս, Թուրքիա և Ուկրաինա: